ԱՐԱՐԱՏԲԱՆԿ

Հասցե՝ 0010, ՀՀ, ք. Երևան, Պուշկինի 19 Հեռ.՝ (+37410) 54-78-95 Ֆաքս՝ (+37410) 54-78-94 Էլ.փոստ՝ araratbank@araratbank.am

ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ԹԻՎ _____

ք. Երևան «__» _____ 20 թ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերությունը (իրավաբանական հասցե՝ ՀՀ, քաղաք Երևան, Պուշկինի 19), այսուհետ՝ «Պահառու», ի դեմս վարչության նախագահ-գործադիր տնօրեն Աշոտ Օսիպյանի, որը գործում է Պահառուի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ----------, այսուհետ՝ «Հաճախորդ», մյուս կողմից, միասին անվանվելով «Կողմեր», ղեկավարվելով ՀՀ օրենսդրությամբ, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պահառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով և պայմաններով, Պահառուի կողմից հաստատված և ծառայությունների մատուցման պահին գործող սակագներին համապատասխան (այսուհետ Սակագներ) սահմանված վճարի դիմաց Հաճախորդին մատուցել սույն պայմանագրի 1.2. կետում նշված պահառության ծառայությունները: Սույն պայմանագրի համաձայն՝ Հաճախորդը հանդես է գալիս որպես.

- Արժեթղթերի սեփականատեր,
- Արժեթղթերի անվանատեր:

1.2. Արժեթղթերի պահառության ծառայությունները ներառում են, մասնավորապես՝

(1) արժեթղթերի հաշիվներ բացելը և վարելը՝ գրանցելով այդ հաշիվներով գործառնությունների ժամկետներն ու էական պայմանները,

(2) արժեթղթերի նկատմամբ հաճախորդի գույքային իրավունքների գրանցման հետ կապված ծառայությունները,

(3) Կենտրոնական դեպոզիտարիայում, ՀՀ կենտրոնական բանկում և/կամ այլ պահառուների (այդ թվում՝ օտարերկրյա) մոտ արժեթղթերի անվանատեր հանդես գալը՝ որպես պահառության ծառայությունների իրականացման միջոց և երաշխիք,

(4) արժեթղթերից բխող իրավունքների իրականացման նպատակով թողարկողից կամ այլ պահառուներից օրենքով, ինչպես նաև Հաճախորդի կողմից թողարկողին կամ այլ պահառուներին տեղեկությունների և փաստաթղթերի փոխանցումը,

(5) արժեթղթերի նկատմամբ կամ դրանցից բխող սեփականության և այլ գույքային իրավունքները հաշվառելու, այդ իրավունքներն ամրագրելու, փոխանցելու, դադարեցնելու և այլ գործառնությունները գրանցելու հետ կապված այլ ծառայություններ:

1.3. Հաճախորդը Պահառուի կողմից մատուցված ծառայությունների դիմաց նրան վճարում է՝ Սակագներով սահմանված կարգով և չափով: Նոր սակագների սահմանման դեպքում Պահառուն ծանուցում է այդ մասին Հաճախորդին սույն պայմանագրով սահմանված կարգով: Ընդ որում, պատշաճ ծանուցում է համարվում փոփոխված Սակագները Պահառուի պաշտոնական ինտերնետային կայքում տեղադրումը: Վճարումները իրականացվում են Հաճախորդի՝ Պահառուի մոտ սպասարկվող

Բանկային հաշվից յուրաքանչյուր Բանկային օրվա վերջում անակցեպտ գանձումների միջոցով՝ տվյալ օրվա գործառնությունների համար վճարման ենթակա գումարի չափով:

1.4. Սույն պայմանագրի կնքումը չի ենթադրում արժեթղթերի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցում Հաճախորդից Պահառուին:
1.5. Սույն պայմանագրի կնքմամբ Հաճախորդից չի պահանջվում արժեթղթերի անհապաղ մուտքագրում արժեթղթերի հաշվին:
1.6. Սույն պայմանագրում օգտագործվող հասկացություններն ունեն այն նշանակությունը, որը սահմանված է Պահառուի կողմից հաստատված Արժեթղթերի պահառության իրականացման ընթացակարգում (այսուհետ՝ «Պահառության ընթացակարգ»), եթե սույն պայմանագրով այլ սահմանում չի տրվում:

2. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1. Պահառուն Հաճախորդի արժեթղթերի հաշիվը բացում և վարում է իր և այլ հաճախորդների հաշիվներից առանձին՝ ՀՀ օրենսդրությանը, սույն պայմանագրի պայմաններին և դրա ներքո կնքված համաձայնագրերին, ինչպես նաև Պահառության ընթացակարգին համապատասխան:
2.2. Սույն պայմանագրի կնքումից հետո՝ առավելագույնը 2 օրվա ընթացքում Պահառուն բացում և սպասարկում է Հաճախորդի արժեթղթերի հաշիվ, որի վավերապայմանները Հաճախորդին ներկայացվում են էլեկտրոնային փոստի միջոցով:
2.3. Հաշվով գործառնությունների (արժեթղթերի մուտքագրում/ելքագրում) կատարման հիմք կարող են հանդիսանալ ՀՀ կենտրոնական բանկում և/կամ այլ պահառուների մոտ բացված Պահառուի անվանատիրոջ հաշիվներին հօգուտ Հաճախորդի մուտքագրված/ելքագրված արժեղթերի վերաբերյալ Պահառուի ստացած ծանուցումը:
2.4. Հաշվին արժեթղթեր կարող են մուտքագրվել նաև Պահառուի այլ հաճախորդի արժեթղթերի հաշիվից՝ վերջինիս կողմից տրված հանձնարարականի հիման վրա:
2.5. Հաշվից արժեթղթերի փոխանցումը և Հաշվին արժեթղթերի մուտքագրումը իրականացվում է արժեթղթերի փոխանցման հանձնարարականի (Պահառության ընթացակարգի Հավելված 3, Հավելված 14 կամ Հավելված 15՝ ըստ կիրառելիության) հիման վրա:
2.6. Հաշվում առկա արժեթղթերի գրավադրումը/արգելադրումը և գրավադրումից/արգելադրումից հանելը իրականացվում է համապատասխանաբար արժեթղթերի արգելադրման/գրավադրման և արժեթղթերի արգելադրման/գրավադրման դադարեցման հանձնարարականների (Պահառության ընթացակարգի Հավելված 4 կամ Հավելված 5 կամ Հավելված 16՝ ըստ կիրառելիության) հիման վրա:
2.7. Սույն պայմանագրի 2.5. և 2.6 կետերում նշված գործառնությունները կատարվում են անհրաժեշտ պայմանների առկայության դեպքում՝ ըստ համապատասխան հանձնարարականների ընդունման հերթականության՝ առավելագույնը 2 աշխատանքային օրվա ընթացքում՝ բացառությամբ Պահառության ընթացակարգով սահմանված դեպքերի:
2.8. Պետական պարտատոմսերով պահառուական գործառնությունները Բանկի կողմից կատարվում են պետական պարտատոմսերի պահառությունը կարգավորող Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի իրավական ակտերին և Պահառության ընթացակարգին համապատասխան:
2.9. Հանձնարարականները ոչ իրավասու անձի կողմից ներկայացնելը, սահմանված ձևի խախտմամբ և/կամ բովանդակության բացակայությամբ ներկայացնելը հիմք է Հանձնարարականի կատարման մերժման համար:

2.10. Արժեթղթերի հաշիվը բացվում է միայն Պահառուի մոտ Հաճախորդի ընթացիկ հաշվի առկայության դեպքում և Պահառության ընթացակարգով սահմանված կարգով:

2.11. Արժեթղթերի հաշվով գործառնությունները կատարվում են նաև Պահառուին Պահառության ընթացակարգի համապատասխան տրված հանձնարարականի և գործառնության կատարման համար անհրաժեշտ այլ փաստաթղթերի տրամադրման միջոցով: Հանձնարարականների տրամադրման կարգը սահմանվում է Պահառության ընթացակարգով:

2.12. Պահառուն պահառուական գործառնությունները կատարում է բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի ստացման պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում՝ բացառությամբ սույն պայմանագրով և/կամ Պահառության կարգով նախատեսված դեպքերի: Պահառուական գործառնությունների կատարման արդյունքում Պահառուն Հաճախորդին (նրա լիազորված ներկայացուցչին) է փոխանցում (ուղարկում) գործառնության կատարման մասին հաշվետվություն՝ Պահառության ընթացակարգով սահմանված կարգով:

2.13. Հաճախորդը գիտակցում է, որ Հաշիվը դրանում հաշվառվող արժեթղթերի առաջնային պահպանման վայր չի հանդիսանում, և Պահառուն չի վարում արժեթղթերի սեփականատերերի ռեեստրը: Պահառուն հանդես է գալիս Հաշվում հաշվառվող արժեթղթերի անվանատեր այդ արժեթղթերի այլ պահառուների առջև՝ նրանց հետ կնքված պայմանագրերի հիման վրա: Անվանատիրոջ հաշիվներում Հաճախորդին պատկանող արժեթղթերը կարող են միացվել Պահառուի կամ վերջինիս Պահառուների մյուս հաճախորդների արժեթղթերին և չնույնականացվել որպես Հաճախորդինը: Հաճախորդի արժեթղթերի նույնականացումը իրականացվում է բացառապես Պահառուի մոտ բացված և սպասարկվող Արժեթղթերի հաշիվներում: Օտարերկրյա արժեթղթերի պարագայում Պահառուի անվանատիրոջ հաշիվները սպասարկող օտարերկրյա պահառուները նույնպես կարող են հանդես գալ որպես նույն արժեթղթերի անվանատեր այլ պահառուների առջև՝ վերջիններիս մոտ ունենալով արժեթղթերի անվանատիրոջ հաշիվներ: Օտարերկրյա արժեթղթերի պարագայում արժեթղթերի պահառությունը իրականացվում է գլոբալ բազմամակարդակ անվանատիրական համակարգի միջոցով, որի յուրաքանչյուր մակարդակում որպես պահառու հանդես եկող անձի մոտ բացված հաշիվներում արժեթղթերը նույնականացվում են բացառապես այդ պահառուի անմիջական հաճախորդ հանդիսացող անձի (պահառուի, իսկ Պահառուի դեպքում՝ Հաճախորդի) անունով:

2.14. Սույնով Հաճախորդը հավաստում է, որ գիտակցում է Հաշվով որոշակի գործառնությունների կատարման անհնարինությունը՝ հաշվի առնելով արժեթղթերի պահառության գլոբալ բազմամակարդակ անվանատիրական համակարգի առանձնահատկությունները: Մասնավորապես, Օտարերկրյա արժեթղթերով գրավի իրավունքի գրանցման կամ արգելադրման հանձնարարականները կարող են չկատարվել այդ արժեթղթերով առքուվաճառքի հանձնարարականների ընդունման, փոխանցման և/կամ կատարման համակարգի առանձնահատկությունների բերումով և դրա համար ինստիտուցիոնալ, կազմակերպչական, տեխնիկական և իրավական հնարավորությունների բացակայության պատճառով:

2.15. Պահառուն այլ պահառուների մոտ հանդես է գալիս որպես Հաճախորդի արժեթղթերի անվանատեր՝ ապահովելու համար սույն պայմանագրի 1.2. կետում նշված ծառայությունների պատշաճ մատուցման հնարավորությունը:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Հաճախորդը պարտավորվում է բարեխղճորեն և պատշաճ կարգով վճարել մատուցված ծառայությունների դիմաց՝ սույն պայմանագրով սահմանված կարգով և Սակագներին համապատասխան:
3.2. Պահառուն պարտավորվում է բարեխղճորեն և պատշաճ կերպով մատուցել սույն պայմանագրի 1.2. կետում նշված ծառայությունները՝ պահպանելով ՀՀ օրենսդրությամբ սահմանված իր ֆիդուցիար պարտականությունը:
3.3. Կողմերը պարտավորվում են բարեխղճորեն համագործակցել սույն պայմանագրի կատարման շրջանակներում:
3.4. Հաճախորդը պարտավոր է Պահառուին անմիջապես տեղեկացնել ներկայացված փաստաթղթերում ներառված տեղեկությունների ցանկացած փոփոխության վերաբերյալ՝ այդպիսի փոփոխությունից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնելով նոր համապատասխան փաստաթուղթ:
3.5. Պահառուն իրավունք ունի.
   3.5.1. Ստանալ Հաճախորդի արժեթղթերի հաշվում գրանցված արժեթղթերի դիմաց վճարվող եկամուտներ և այլ վճարումներ՝ ստացված դրամական միջոցներն այնուհետև փոխանցելով Պահառուի մոտ բացված Հաճախորդի բանկային (ընթացիկ) հաշվին՝ եթե այլ բան սահմանված չէ Պահառության ընթացակարգով կամ Պահառուի և Հաճախորդի միջև կնքված պայմանագրով:
   3.5.2. Սույն պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում Հաճախորդից գանձել պահառության ծառայությունների մատուցման դիմաց վճարումները, այդ թվում՝ պահառության ընթացքում կատարված ծախսերի փոխհատուցումը:
   3.5.3. Օրենսդրությամբ և/կամ Պահառության ընթացակարգով նախատեսված դեպքերում հրաժարվել Հաճախորդի կողմից ներկայացրած հանձնարարականների կատարումից:
3.6. Հաճախորդն իրավունք ունի.
   3.6.1. Պահառուին ներկայացնել արժեթղթերով ՀՀ օրենսդրությամբ չարգելված ցանկացած գործառնություն կատարելու հանձնարարական՝ արժեթղթերի թողարկման և շրջանառության պայմաններով և/կամ Պահառության ընթացակարգով սահմանված կարգով:
   3.6.2. ՀՀ օրենսդրությամբ և Պահառության ընթացակարգով սահմանված կարգով Պահառուի մոտ հաշվառվող արժեթղթերի տնօրինման և արժեթղթերից բխող իրավունքների իրականացման լիազորությունները փոխանցել այլ անձի՝ իր լիազորված ներկայացուցչին:
   3.6.3. Հարցման միջոցով Պահառուից ստանալ արժեթղթերի տիրապետումից ծագող իրավունքների իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվությունը:
   3.6.4. Պահառուական գործառնությունների արդյունքները բողոքարկել Պահառության ընթացակարգով սահմանված կարգով և ժամկետներում:
   3.6.5. Ստանալ արժեթղթերի հաշվի վիճակի և դրանում հաշվառվող արժեթղթերի, ինչպես նաև ցանկացած պահառուական գործառնության վերաբերյալ հաշվետվություններ և/կամ քաղվածքներ՝ Պահառության ընթացակարգով սահմանված կարգով:
3.7. Պահառուն պարտավոր է.
   3.7.1. Բացել և վարել Հաճախորդի՝ այլ հաշիվներից առանձին արժեթղթերի հաշիվներ՝ նշելով արժեթղթերի հաշվով կատարված յուրաքանչյուր գործառնության ամսաթիվն ու հիմքը:
   3.7.2. Պահպանել ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված պահառության գործունեության իրականացման պահանջները:

3.7.3. Հաճախորդի հանձնարարությամբ և Պահառության ընթացակարգով սահմանված կարգով գրանցել Հաճախորդի արժեթղթերի՝ պարտավորություններով ծանրաբեռնման դեպքերը:

3.7.4. Պահառության ընթացակարգով սահմանված կարգով Հաճախորդին կամ նրա լիազորված ներկայացուցչին տրամադրել Հաճախորդի արժեթղթերի հաշվով կատարված գործառնությունների վերաբերյալ հաշվետվություններ:

3.7.5. Գրավոր հարցման հիման վրա կամ Պահառության ընթացակարգով սահմանված այլ ձևով Հաճախորդի արժեթղթերի հաշվից արժեթղթերի նկատմամբ իրավունքները հավաստող քաղվածքներ և արժեթղթերի հաշվի վերաբերյալ ցանկացած այլ տեղեկատվություն տրամադրել՝ Պահառության ընթացակարգով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.7.6. Արժեթղթերի հաշվում գրանցված արժեթղթերով գործառնություններ կատարել, ինչպես նաև դրանցից բխող իրավունքներն իրականացնել բացառապես Հաճախորդի (նրա լիազորված ներկայացուցչի) հանձնարարականների հիման վրա կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված (չարգելված) այլ դեպքերում:

3.7.7. Պահառության ընթացակարգով սահմանված կարգով և դեպքերում, այդ թվում՝ ներկայացված փաստաթղթերը խախտումներով ձևակերպված լինելու դեպքում, մերժել Հաճախորդի (նրա լիազորված ներկայացուցչի) ներկայացրած հանձնարարականի կատարումը՝ ներկայացնելով համապատասխան գրավոր հիմնավորում:

3.7.8. Պահառության ընթացակարգով սահմանված կարգով Հաճախորդի՝ արժեթղթերից բխող իրավունքների իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվությունը և/կամ փաստաթղթերը փոխանցել թողարկողներից կամ այլ պահառուներից (որտեղ Պահառուն ունի բացված անվանատիրոջ հաշիվ) Հաճախորդին (նրա լիազորված ներկայացուցչին) և Հաճախորդից թողարկողներին ու այլ պահառուներին (որտեղ Պահառուն ունի բացված անվանատիրոջ հաշիվ):

3.7.9. Ընդունել և քննարկել պահառուական գործառնությունների վերաբերյալ Հաճախորդի կողմից ներկայացված բողոքները՝ Պահառության ընթացակարգով սահմանված կարգով:

3.7.10. Հաճախորդի պահանջով կամ սույն պայմանագրի գործողությունը դադարեցնելու դեպքում՝ ոչ ուշ, քան Պահառուի կողմից Հաճախորդի (նրա լիազորված ներկայացուցչի) համապատասխան գրությունը ստանալու օրվան հաջորդող օրվա ընթացքում, արժեթղթերը փոխանցել այլ պահառուի մոտ բացված՝ Հաճախորդի նշած համապատասխան հաշվին՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նշված արժեթղթերի տնօրինման իրավունքը սահմանափակված է Պահառության ընթացակարգով և (կամ) ՀՀ գործող օրենսդրությամբ նախատեսված հիմքերով:

3.7.11. Տեղեկացնել Հաճախորդին Պահառության ընթացակարգի և Սակագներում փոփոխությունների մասին ոչ ուշ, քան դրանց ուժի մեջ մտնելու ամսաթվից երեսուն օրացույցային օր առաջ:

3.7.12. Արժեթղթերի հաշվում գրանցված արժեթղթերի իրավունքների պատշաճ իրականացման նպատակով Պահառուն պարտավոր է.

- լրիվ ծավալով և Պահառության ընթացակարգով նախատեսված կարգով ու ժամկետներում փոխանցել արժեթղթերի դիմաց վճարված եկամուտները (եթե այլ բան սահմանված չէ օրենսդրությամբ և/կամ Հաճախորդի հետ կնքված պայմանագրով)՝ Պահառուի մոտ բացված Հաճախորդի բանկային հաշվին, իսկ Արժեթղթերի հաշվին կից բրոքերային հաշվի առկայության դեպքում՝ Հաճախորդի համապատասխան բրոքերային հաշվին՝ պահելով

գործառնության կատարման համար համապատասխան միջնորդավճարները և/կամ հարկերը,

- իրականացնել ՀՀ գործող օրենսդրությամբ և Պահառության ընթացակարգով նախատեսված այլ գործառնություններ:

3.7.13. Ապահովել արժեթղթերի հաշիվների մասին տեղեկատվության գաղտնիությունը, ներառյալ հաշիվներով իրականացված գործառնությունների մասին և պահառության գործունեության իրականացման արդյունքում հայտնի դարձած այլ տեղեկությունները, ինչպես նաև չօգտագործել այդ տեղեկությունն այնպիսի նպատակներով, որոնք կարող են Հաճախորդին վնաս պատճառել: Երրորդ անձանց Հաճախորդի և նրա արժեթղթերի հաշվի վերաբերյալ տեղեկություններ տրամադրվում են ՀՀ օրենսդրությամբ, սույն պայմանագրով և Պահառության ընթացակարգով սահմանված դեպքերում:

3.8. Հաճախորդը պարտավոր է.

3.8.1. Պահառուին տրամադրել արժեթղթերի հաշվի բացման և դրա հետագա վարման համար անհրաժեշտ փաստաթղթերը՝ Պահառության ընթացակարգին համապատասխան:

3.8.2. Պահպանել ՀՀ օրենսդրությամբ, արժեթղթերի թողարկման և շրջանառության պայմաններով և Պահառության ընթացակարգով սահմանված պահանջները, այդ թվում՝ ձևակերպել և Պահառուին փոխանցել արժեթղթերով գործառնությունների կատարման հանձնարարականները:

3.8.3. Պահպանել Պահառության ընթացակարգով սահմանված հաճախորդների վերաբերյալ սահմանված պահանջները:

3.8.4. Պահառուին տեղեկացնել հիմնադիր փաստաթղթերի և (կամ) վավերապայմանների (փոստային և իրավաբանական հասցեների, բանկային հաշվի վավերապայմանների, հեռախոսային և ֆաքսիմիլային կապի համարների, էլեկտրոնային հասցեների), ինչպես նաև Հաճախորդի արժեթղթերի հաշիվը տնօրինելու լիազորություն ունեցող անձանց տվյալների բոլոր փոփոխությունների մասին, Պահառուին տրամադրել համապատասխան փոփոխությունները հավաստող բոլոր փաստաթղթերը՝ Պահառության ընթացակարգով սահմանված կարգով և ժամկետներում:

3.8.5. Սույն պայմանագրով և/կամ Պահառության ընթացակարգով սահմանված կարգով և ժամկետներում կատարել Պահառուի ծառայությունների դիմաց վճարումները:

3.8.6. Պահառուի պահանջով ներկայացնել լիազորագրեր և այլ փաստաթղթեր՝ արժեթղթերով ամրագրված իրավունքների իրականացման հետ կապված գործառնությունների իրականացման համար:

4. ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԱՎԱՍՏԻԱՑՈՒՄՆԵՐ

4.1. Հաճախորդը հայտարարում և հավաստիացնում է, որ՝

(1) ինքն իր գրանցման (քաղաքացիության) երկրի օրենսդրության համաձայն պատշաճ իրավունակությամբ և գործունակությամբ օժտված անձ է և իրավասու է կնքել սույն պայմանագիրը:

(2) սույն պայմանագիրը ստորագրող անձինք իրավասու են ստորագրել այն Հաճախորդի անունից համաձայն օրենսդրության և Հաճախորդի ներքին իրավական ակտերի (իրավաբանական անձի դեպքում) և այդպիսի ստորագրությամբ Հաճախորդի համար ստեղծել իրավական ուժ ունեցող պարտականություններ:

(3) Հաճախորդը պատշաճ կերպով ծանոթացել է սույն պայմանագրին, Պահառության ընթացակարգին և վերջինիս որպես հավելվածներ կցված բոլոր պայմաններին և այլ փաստաթղթերին, դրանց հետ կապված չունի որևէ հարց, առաջարկություն, դրանց բովանդակությունը իրեն լրացուցիչ բացատրելու կարիք չունի և լիարժեքորեն գիտակցում է դրանց բովանդակությունը:

(4) Համաձայն է, որ սույն պայմանագրով իրեն մատուցված ծառայությունների դիմաց վճարները և ծառայությունները մատուցելու համար Պահառուի կրած այլ ծախսերը անակցեպտ կարգով Պահառուի կողմից գանձվեն Պահառուի մոտ բացված և սպասարկվող բանկային հաշիվներից, ինչպես նաև բանկային այլ հաշիվներից:

4.2. Պահառուն հայտարարում և հավաստիացնում է, որ՝

(1) պատշաճ իրավունակությամբ և գործունակությամբ օժտված անձ է և իրավասու է կնքել սույն պայմանագիրը,

(2) տիրապետում է պահառուական ծառայություններ մատուցելու համար անհրաժեշտ լիցենզիաների և թույլտվությունների,

(3) Պահառուի անունից սույն պայմանագիրը ստորագրող անձինք իրավասու են ստորագրել այն և այդպիսով Պահառուի համար ստեղծել սույն պայմանագրից բխող պարտավորություններ:

5. ԿԱՊԻ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ

5.1. Սույն պայմանագրի շրջանակներում Կողմերի միջև ցանկացած հաղորդագրություն, փաստաթղթերի ներկայացում, փոխանցում, փոխանակում համարվում է պատշաճ կերպով իրականացված, եթե առաքվել է սույն պայմանագրում նշված փոստային և/կամ էլեկտրոնային հասցեներով:

5.2. Կողմերը սույնով հավաստում են, որ սույն պայմանագրի 5.1 կետում նշված հասցեներով առաքված հաղորդագրությունը համարվում է պատշաճ կերպով առաքված՝ կապի հուսալի միջոցներով: Կողմերի համար հուսալի կապի միջոցներ են համարվում սույն պայմաննագրում նշված կապի միջոցները:

5.3. Իրավասու անձանց փոփոխության կամ ավելացման դեպքում, ինչպես նաև Կողմերի այլ վավերապայմանների փոփոխության դեպքում Կողմերը էլեկտրոնային փոստով ծանուցում են միմյանց այդպիսի փոփոխությունների վերաբերյալ փոփոխությունից առնվազ մեկ օր առաջ:

6. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

6.1. Սույն պայմանագրի գործողության կապակցությամբ առաջացած Կողմերի միջև վեճերը ենթակա են լուծման բանակցությունների միջոցով, իսկ 10 օրվա ընթացքում լուծման չգալու դեպքում՝ ՀՀ դատարանների կողմից՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

7.1. Կողմերը պատասխանատվություն են կրում սույն պայմանագրով ստանձնած իրենց պարտականությունների պատշաճ կատարման համար և պարտավոր են այդ պարտականությունները խախտելու դեպքում հատուցել մյուս Կողմին պատճառված վնասը:

7.2. Կողմերը պատասխանատվություն են կրում սույն պայմանագրի 4-րդ գլխում նշված իրենց հայտարարությունների և հավաստիացումների արժանահավատության համար և պարտավոր են հատուցել մյուս Կողմին այդպիսի հայտարարությունների և

հավաստիացումների՝ իրականությանը չհամապատասխանելու արդյունքում պատճառված վնասը: Կողմերը ազատվում են սույն պայմանագրով իրենց պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվությունից, եթե դրա պատճառ է հանդիսացել մյուս Կողմի՝ սույն պայմանագրի 4-րդ գլխում նշված հայտարարությունների և հավաստիացումների իրականությանը չհամապատասխանելը: Յուրաքանչյուր Կողմ պարտավորվում է հատուցել երրորդ կողմին պատճառված ցանկացած վնաս, եթե այդ վնասը առաջանալու պատճառներից է հանդիսացել սույն պայմանագրի 4-րդ գլխում նշված հայտարարությունների և հավաստիացումների իրականությանը չհամապատասխանելը:

7.3. Պահառուն պատասխանատվություն չի կրում երրորդ անձանց, այդ թվում՝ անվանատիրոջ հաշիվները վարող և սպասարկող, ինչպես նաև Պահառուի հաճախորդների և այդ թվում՝ Հաճախորդի միջոցների անվանատեր պահառու ընտրված անձանց անվճարունակության կամ սնանկության, ինչպես նաև նրանց կողմից գործարքներով, այդ թվում՝ արժեթղթերի փոխանցման հանձնարարականներից բխող պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հետևանքով Հաճախորդին պատճառված վնասի համար, եթե չգիտեր և չէր կարող իմանալ նշված հանգամանքների առկայության կամ անխուսափելիության մասին: Պահառուն պարտավորվում է պատշաճ շրջահայացություն ցուցաբերել իր անմիջական գործընկեր հանդիսացող պահառուներ ընտրելիս՝ այնպես, որ հնարավորինս ապահովվի հաճախորդների շահերի պաշտպանությունը, եթե Պահառուն հնարավորություն ունի ընտրելու այդպիսի գործընկեր պահառուների:

7.4. Հաճախորդը պարտավորվում է հատուցել Պահառուի կրած ցանկացած վնաս, որը արդյունք է հանդիսացել սույն պայմանագրի համաձայն Պահառուի կողմից ծառայությունների մատուցման շրջանակներում երրորդ անձանց կողմից Պահառուին ներկայացված պահանջների բավարարման: Հաճախորդը ազատվում է պատասխանատվությունից միայն այն դեպքում, եթե այդպիսի պահանջների հիմք են հանդիսացել Պահառուի՝ Հաճախորդի գործողություններով, այդ թվում՝ հանձնարարականներով չպայմանավորված անիրավաչափ գործողությունները:

8. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1. Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է անորոշ ժամկետով, մինչև սույն պայմանագրով կամ օրենքով սահմանված հիմքերով դրա գործողության դադարումը: Բոլոր դեպքերում, սակայն, պայմանագիրը շարունակում է գործել ընդհուպ մինչև սույն պայմանագրով Կողմերի ստանձնած պարտավորությունների և պարտականությունների լրիվ և պատշաճ կատարումը:

8.2. Սույն պայմանագիրը Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ կարող է լուծվել մյուս Կողմին այդ մասին առնվազն 20 օր առաջ գրավոր ծանուցելու միջոցով:

8.3. Սույն պայմանագրի լուծման դեպքում Պահառուն ապահովում է Հաճախորդի արժեթղթերի և/կամ դրամական միջոցների վերադարձը վերջինիս՝ այդ միջոցները փոխանցելով Հաճախորդի կողմից նշված հաշիվներին՝ օրենքով սահմանված ժամկետներում:

8.4. Եթե պայմանագիրը լուծվել է Հաճախորդի նախաձեռնությամբ, վերջինս պարտավոր է հատուցել Պահառուին դրա լուծման հետևանքով սույն պայմանագրի 8.3. կետի համաձայն անհրաժեշտ դարձած գործողությունների հետ կապված ծախսերը:

8.5. Պահառության ընթացակարգը և դրա լրացումները սույն պայմանագրի անբաժանելի մասն են կազմում:

8.6. Հաճախորդը հաստատում է, որ ծանոթացել է Պահառության ընթացակարգին և տեղեկացված է այն մասին, որ Պահառուն պահառության ծառայությունը համատեղում է արժեթղթերի շուկայում նեդրումային ծառայության այլ տեսակների, ինչպես նաև բանկային գործունեության հետ: Սույն պայմանագրով չկարգավորված դեպքերում Կողմերն առաջնորդվում են ՀՀ օրենսդրությամբ և/կամ Պահառության ընթացակարգով:

8.7. Սույն պայմանագիրը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր Կողմին մեկական օրինակ՝ օժտված հավասար իրավաբանական ուժով:

8.8. Սույն պայմանագրի բոլոր փոփոխությունները և լրացումները կատարվում են գրավոր ձևով Կողմերի համաձայնությամբ, բացառությամբ Պահառության ընթացակարգի և/կամ Սակագների փոփոխությունների և լրացումների, որոնք կատարվում են Պահառուի կողմից միակողմանիորեն:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՀԱՌՈՒ	***ՀԱՃԱԽՈՐԴ***
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ՀՎՀՀ 02500518 Հ/Հ 103002101519 ՀՀ ԿԲ ՀՀ, 0010, ք. Երևան, Պուշկինի 19, էլ. հասցե. www.araratbank.am Վարչության նախագահ-գործադիր տնօրեն՝ Աշոտ Օսիպյան Կ. Տ.	